

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Ք օ Ն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաւրդանչիւր բառին 2 կոպեկ.

Տ է Լ Է Ք օ Ն № 253.

Շ Ա Ր Ո Ւ Ն Ա Կ Վ Ո Ւ Մ Է

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ԲԱԺԱՆՈՒԳՐՈՒԹԻՒՆԸ

«ՄՇԱԿ» տարեկան գինը՝ թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., ամսական 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՐԱԳՐԱՍՏԱՆԸ:
Օտարաբարակացիները պէտք է գիտեն հետևել հասցեով՝ Тифлисть. Редакция «Мшакъ»: Խիս արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վնասակար բարքեր. — Ներքին Տեսութիւն. Օրէնք. Մատենագրութիւն. Նամակներ Մոսկովայից. Նամակ Երևանից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ Թիֆլիսից. — ԽԱՌՆ. ԼՈՒՐԵՐ. — ՀՆՈՒԱԳՐՈՒՆԵՐ. — ԲՕՐԱՍ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ. ՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՄԱԿԱՆ. Գիտութեան բացակայութիւնը հայերի մէջ.

ՎԱՅՐԵՆԱՑԱՆ ԲԱՐՔԵՐ

Անկաշառ, ագնիւ մամուլը ամեն դէպքում իր կոչումն է համարում անխնայ մեղքաւորութիւն. Կա նրա միակ ուժեղ միջոցն է հասարակական արտաքին հայածելու, հասարակաց կարծիքը ղեկավարելու, այս կամ այն երևոյթի վերաբերմամբ նոր կարծիք ստեղծելու համար: Ողորմելի, բարոյապէս փչացած կը լինէր մի հասարակութիւն, եթէ իմանար թէ իր շահերը նպատակ ընտրած մամուլը ծառայում է ստոր, զրուելի սկզբունքների և շարունակէր դարձնել հաւատ ընծայել նրան յարգել նրա գործունէութիւնը: Իսկ այդ հասարակութիւնը վրա հիմնելով իր մեծ կարողութիւնը, մամուլը չէ ծանաչում մի այլ գէշը, բացի գրէցի, մի այլ կոնսորցի, բացի զրական էթիքայի օրէնքները: Նա ամեն

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԳԻՏՈՒԹԵԱՆ ԲԱՅԱԿԱՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՏԵՐԻ ՄԷ:

Գիտութեան տուած պտուղները ամենքն են վայելում, և գուցէ մենք մի բոլորովին աւելորդ և ինքն ըստ ինքեան հասկանալի բան ասած կը լինէինք, եթէ սկսէինք բացատրել գիտութեան ահազին նշանակութիւնը թէ ընդհանրապէս ամբողջ մարդկութեան համար և թէ մասնաւորապէս ամեն մի ազգի համար. բաւական է յիշել այն տարրական համարութիւնը, որ գիտութիւնը մարդկութեան մտաւոր, բարոյական, անտեսական և այլ պահանջներին բաւարարութիւն տրուող գլխաւոր, եթէ չասենք միակ, միջոցն է հանգիստանում, որ վերջին դարերի արած առաջադիմութեան հակադէմքն արած պարտական են գիտութեան, որ ստրկութեան, ինկվիզիցիայի, ճորտութեան և համաշխարհային կեանքի այսպիսի հրէշաւոր երևոյթների խորտակումը պէտք է վերագրել նոյնպէս գիտութեան:

Մեր մէջ գիտութիւնը, սակայն, համարեա բոլորովին արհամարհված է: Մեր հասարակութեան մտածող դասը, կարծում ենք, չէ կարող հերքել

ժամանակ պատրաստ է անողորմ կռիւ մղել իր պաշտպանած սկզբունքների համար, մի կռիւ, որ հիմնված է փաստերի, արդար, ճշմարիտ և լուսաւոր հասկացողութիւնների վրա: Եւ երբ ունի այդ բոլոր նիւթերը իր ձեռքի տակ, նա դառնում է պատժող, ոչնչացնող մի ոյժ:

Հրապարակական գործունէութեան այդ ագնիւ և անկաշառ կերպարանը միշտ հալածել է, ոչնչացրել է, բարոյական մահվան է դատապարտել ամեն մի խաւար ոյժ, ամեն մի բարոյական այլադասութիւն և զրուելի երևոյթ թէ անհասկանալի և թէ հասարակական ամբողջ մարմինների մէջ, որոնք խոչընդոտ են դառնում հասարակաց մտքի կանոնաւոր առաջադիմութեան, որոնք թուլացնում են հասարակութեան համար այնքան անհրաժեշտ, այնքան վերաշինող ըննադատութեան ոգին:

Այդպէս միայն կարող է մամուլը կատարել իր դերը: Ոչինչ միակողմանի, արտօնեալ իրաւունք մամուլը իւրացնել չէ կարող: Մի ճշմարտութիւն պարզելու համար նա միայն դատապարտող չէ, այլ և իր դատապարտածի պաշտպան, երբ նա փաստեր ունի իրան արդարացիութեւ համար: Բայց այդ բոլորը նա կատարում է ապագայական խօսքի միջոցով, կատարում է այն հանգամանքների օգնութեամբ, որոնք միայն ծանօթ են նրան, այն է գրելու և գրածը հերքելու օգնութեամբ:

Սակայն վերջին ժամանակները մի բանի դէպքեր պատահեցին թէ Ռուսաստանում և թէ մեզ մօտ Թիֆլիսում, որոնք կարծես ուզում են ապացուցանել թէ մամուլը, հրապարակաւորութեան հետ կարելի է գործ տեսնել և բաւանցողի, մի միջոցով, որ միայն վայրենիներն են գործ դնում իւրանց թշնամիների դէմ: Այդ երևոյթը հաստատում է մի բան, այն, որ մամուլի ձայնը անտես առնել չեն կարողանում նոյն իսկ այնպիսի մարդիկ, որոնք կարողութիւն ունեն տեսնել իրանց պատկերը հայելու մէջ, բայց Վրկիովի կապիկի պէս հայելին են համարում իրանց այլադասութեան պատճառ, ուստի իրանց զրպաններում բռնուցք են պատրաստում, իսկ սրտի մէջ հաւաքում են՝ գողի նման յարձակվելու քաջութիւնը: Հարց է կարգի, թէ փողոցը իր բռնուցքներով, փայտերով, նոյն իսկ ատրճանակներով տիրել մամուլի վրա,

հարկադրել նրան շեղվել իր կոչումից, դառնալ վախկոտ, ամեն մի հովից տատանող, մոլորված մի բան, որ իր գործունէութեան մէջ աչքի առաջ պիտի ունենայ ոչ թէ յաւիտեական սկզբունքները, այլ այն, թէ որ կողմն աւելի զօրեղ բազմութիւնը ունի և ընդունակ է նոյն իսկ արիւն թափել: Եթէ տեղի ունենար մի այդպիսի հանգամանք, եթէ փողոցը այդպիսի իշխող դեր կարողանար կատարել, այն ժամանակ պէտք էր ամբողջ սրտով ցանկալի, որ գոյութիւն չունենայ մամուլ, որովհետեւ մի այնպիսի հասարակութիւն, որ թոյլ կը տար այդպիսի իրողութիւն, զրանով կապալցուցանէր աշխարհի առաջ, որ ինքն անարժան է վայելել ու պաշտպան խօսքի բարեբը:

Սակայն մենք ուրախութեամբ տեսնում ենք, որ հասարակութիւնը բռնուցքի վատաճողի հերոսներից շատ է բարձր կանգնած. և ամեն տեղ, ուր պատահում է նրանց քաջագործութիւններից մէկն ու մէկը, հասարակութիւնը շտապում է իր ջերմ համակրանքը յայտնել վայրենի յարձակման ենթարկողներին: Գրանով հասարակութիւնն ինքն է ցոյց տալիս մամուլին, որ նա չը պիտի ընկճվի բռնութեան արարքներից, ցոյց է տալիս, որ ինքը իսկապէս կարող է անկախ, ագնիւ մամուլին:

Ուրեմն այդպիսի մամուլի պաշտօնը կը մնայ մի և նոյնը — անխնայ մեղքաւորութիւն: Բողոքելով փողոցի արարքների դէմ, մամուլը ոտի տակ կը թողնէ տխուր հերոսներին և առեւ կը զնայ: Ամենից առաջ ագնիւ, անկախ, մարդկող խօսքը: — Այս դէպքեր իր սկզբնաւորութիւնից քարոզող «Մշակը» իր բողոքն ու զայրոյթը միայնում է այն ուսումնասիրել ձայնին, որ վրդովում է ամեն մի սահմանափակութեան դէմ, որ ձգտում են մտնել վայրենացած բարքերի տէր մարդիկ մամուլի անկախութեան մէջ: Այս դէպքում էլ մենք գէշ ենք չարութեամբ հայտն անբարոյականացած, փողոցային մամուլը, որ ոչ միայն չէ դատապարտել վայրենիների արշաւանքը մամուլի դէմ, այլ հասել է բարոյական անկման այն աստիճանին, որ կամ լուռութիւն է պահպանում և կամ զրուելի փորձեր է անում նոյն իսկ պաշտպանել վայրենիներին:

Գրութիւնը այս կարեւոր հարցի վրա, մենք չենք մոռանում, թէ հարկէ, այդպիսի ներքին արգելքները Մենք չենք մոռանում նոյնպէս և արտաքին արգելքները: Բայց մեզ թողված ինքնագործունէութեան նոյն իսկ այս նեղ և ճնշված ասպարիզում, մենք պէտք է կենտրոնացնենք մեր ոյժերը առաջադիմութեան այդ միակ և վստահելի աղբիւրը — գիտութեան վրա: Զանազան աղբիւրի անցեալը մեզ ցոյց է տալիս, որ միայն այն ազգերն են առաջնակարգ դեր կատարել, որոնց մէջ գիտութիւնը աւելի յարգված և ուրեմն աւելի բարգաւաճ գրութեան մէջ է եղել: Նոյնը աւելի պարզ կերպով տեսնում ենք և ներկայումս: Այդ ի նկատի ունենալով, մենք ես, եթէ չենք ցանկանում աղբիւրի ընդհանուր մրցման հոսանքում տրոհված և անհասկացած լինել, պիտի մեր փրկութիւնը տեսնենք ոչ թէ մեր ազգային նախապաշարմունքների, դէպի խաւարն առաջնորդող սովորութիւնների ամբողջ պահպանելու մէջ, այլ գիտութիւնը և նրա բարեբները իւրացնելու մէջ: Ինչ միջոցներ կան այժմ մեր ձեռքում այդ ուղղութեամբ գործելու: Մեր ուսումնաբաններից, մասնաւոր սեմինարիաներից և ճեմարաններից պէտք է հեռացնել սկզբնաւորական և նրանց ծրագրերի պատշաճ փոփոխութեամբ ազդեցութեան պատուաւոր տեղ մնացած աւարականների շարքում, և գիտութեան վերաբե-

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Օ Ր Է Յ Օ Ր
XXVI

Ժողովը փակվեց: Աղմուկներն ակամայ վերջացան, կրեւր դադար արին և տաքացած հոգիները իրանց լեզուները կծած, մի-մի հարցական նշան դարձած, սպասում են...

Ժողովը փակվեց, բայց առանց հարցեր լուծելու, առանց մի որոշ վախճան տալու կրեւր յուզող հարցերին, որոնք մի ամսից ի վեր Թիֆլիսում կաշկանդած պահում էին Վրաստանի բոլոր տեղերի աղնականներին, վրաց ժողովրդի այդ մեծամիտ ներկայացուցիչներին...

Մտածում են արգելք վրաց ազնւականութեան և ինտելիգենցիայի ներկայացուցիչները, դէթ այժմ, երբ ժողովի զանիւն կրեւր փակված են, այժմ, երբ իրանց կրեւրն ամսն է զրկած, թէ ինչ տխուր, ճնշող, յուսահատեցնող եղանակացութեան է բերում այն բոլորը, ինչ որ կատարվեց բանկի թատրոնի դահլիճում և շուրջը: — արդար խօսքի տեղ հրապարակ եկաւ բռնուցքը, փայտը, բաւառանքը, կաշառքը, մի խօսքով այն բոլորը, որ վայել է միայն վայրենի, անկրթ, անազգայացած մի հասարակութեան, բայց ոչ մի ժողովրդի, որ իրան համարում է ընդունակ ըմբռնել հասարակական գաղափարը, և ընկերաբար, կուլիգիալ կերպով գործելու բաւարարը:

Մի համեստ հիմնարկութիւն, ինչպէս է կաւոլածական բանկը, մի համակրելի կանոնադրութիւն, ինչպիսին է այդ բանկի կանոնադրութիւնը, որ թոյլ է տալիս զարոյցներ հիմնել, օգնել թատրոնին... ձեռք մեկնել կարօտ դիւղացուն, նոյն իսկ զանազան բարեգործութիւններ անել, սակայն մի ամբողջ ազգի ներկայացուցիչները բացարձակ ցոյց տուին, որ անընդունակ են օգտվել այդ բոլորից, և այնքան չեն հասունացած, որ փոխանակ իրանց ձեռքերում եղած միջոցներով օգնելու գործին, դարձնում են հասարակական հիմնարկութիւնը և հրապարակական ժողովները բռնուցքի, մահալի, զրպարտութեան, կոխների, փողոցային սկանդալների ասպարէզ:

Փութայիսում բանկային ժողովները մի քանի տարի առաջ վերջացան դաշտնեղութիւն և արիւնով, Թիֆլիսի բանկային ժողովները հասցրին մինչև արիւնահեղ ծեծի և անկարագրելի կոխներին,

բեալ առարկաների աւանդումը չը թողնել այս կամ այն տիրացուին, այլ յանձնել ձեռնաստ մարդկանց:

Մեր զրադարաններում, բացի գեղարուեստական և առհասարակ թիթե ընթերցանութեան համար նշանակված այլ և այլ գրութեաններից, հարկաւոր է ունենալ նոյնպէս գիտական գրութեաններ թէ հանրամատչելի և թէ քիչ-չատ լուրջ բովանդակութեամբ: Ամառվայ արձակուրդներին, երբ մեր գաւառական քաղաքներում հաւաքվում է ուսանող և ինտելիգենտ հասարակութիւն, լուրջ գրութեանների պակասը տեղային գրադարաններում աւելի զգալի է դառնում:

Մեր Հրատարակչական ընկերութիւնը նոյնպէս պիտի իր հրատարակութիւնների շարքում յայտնի տեղ տայ գիտական գրութեաններին: Թէ և մի քանի գիտական բովանդակութեամբ հրատարակութիւններ տուէլ է ընկերութիւնը մինչև այժմ, բայց, մեր կարծիքով, այդ շատ քիչ է. գիտական գրքերի հրատարակութեան հարցը ընկերութեան կողմից պիտի առանձին ուշադրութեան առնվի:

Վերջապէս մեր երիտասարդութիւնը — ուսուցիչներ, ուսանողներ միջնակարգ և բարձրագոյն զարգացող, գրողներ, գրողներ և այլն — չը պիտի բաւականանայ գիտութեան և առհասարակ կրթութեան այն պաշարով, որը նրան տալիս է այս

էին նրանց այլանդակված կերպարանքները. երեսները կարծած, ոտնահարութիւններէնց ցեխոտած, փոշոտած և տանջանքներէնց ծոված բերաններէն արիւն: Հրուշէքները կրում էին նրանց և ածում սայլերն ու տանում բաժանում քաղաքի պօլիցիական տներում:

Ականատեսներէն մէկը պատմեց, թէ ինչպէս էր պատահել այդ ջարդը: Ահապէս ամբողջ մինչև առաւօտեան ժամի 6-ը սպասում էր իր «փախին»: Պօլիցիան չառ քիչ էր հոգի տարել այդ անապիւն բազմութեան մէջ կարգ պահպանելու: Եղած փոքրաթիւ պօլիցիայի մի մասը կողմնակից է եղել, որոնք անփորձ լինելով, կարծել են թէ մտաբան ամենազօրութիւնը միջոցն է կարգապահութեան: Ժամի 6-ին յանկարծ լսվեց «բաժանում են»: Կարծես խելացիոր եղաւ ամբողջը. սկսվեց մի անկարգութիւն իրարանցում. իրար ձմարւմ էին և հրում. մէջտեղ ընկածները աղաչում էին՝ «отпустите душу на покой», բայց ո՛վ էր լսում և ո՛վ կարող էր հարկել հազար մարդկանց գոյութիւնը ընդդիմադրել: Մարդիկ խեղդվում էին կամ ձմրվելով չունչները փչում, իսկ ընկնողը սոսի տակ էր տրորվում: Գոյնալիս իրարանցումը սաստկանում է, երբ ժողովրդին «ընծաներ» մատակարարող հարուստ «բողոքաբեկներ» գործակալները սկսում են ամբողջ փրա նետել ուտելիքների կապոցները և էմալի բաժակները. ով կուտում էր վերցնելու, այլ ես էլ քր վերցնեմ. իրար ձեռից խլում էին «ընծան»: Աւելի ազատները, վախճանով որ իրանց բան չը հասնի, ուղղակի յարձակվում են, կոտորում և յափշտակում բուֆետները: Ժամի 8-ին ամեն բան «լինցած» էր. ամբողջ յետ է քաշվում դատարկ բուֆետներէն, թողնելով գետնի երեսին բազմաթիւ զոհեր: Սոսկումով հետացաւ...

Թի խանութները փակած էին: Հինգշաբթի երեկոյին հրավառութիւնը շարունակվում էր:

ՆԱՄԱԿ ԽՄԱԳՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մայիսի 24-ին

«Տարազ» № 19-ում պ. Աւետիք Արասխանեանցը մեր նամակը, որ տղված էր «Մշակ» № 55 ի մէջ, համարում է կեղծիք և ոչ արժանահատ, և մեր հասցէին ուղղում է վիրաւորական խօսքեր:

Մենք սրանով յայտարարում ենք, որ մենք, բոլոր 7 հոգիս, պատասխանատու ենք մեր անցեալ նամակի ամեն մի բառի համար, և հրապարակում ենք անվաղեղ պ. Արասխանեանցի նոր վարժուէրը, որով աշխատում է խուսափել հարցին ըստ էութեան պատասխանելուց:

Ուստի դարձեալ պնդելով մեր նախորդ նամակում մեր բոլոր տառերի վրա՝ մենք պահանջում ենք պ. Արասխանեանցից՝ հրապարակով յետ վերցնել իր վիրաւորական խօսքերը, որ թոյլ էր տուել իրան ասել մեր հասցէին «Տարազ» № 19-ում, հակառակ դէպքում մենք ստիպված կը լինենք միջնորդ դատարանի դիմելու:

Սա մեր վերջին խօսքն է նրան՝ մամուլի միջոցով:

Ստ. Մախախանց, Յակ. Քոչարեանց, Ք. Յովհաննիսեանց, Ս. Բալազեանց, Կոստ. Գիլանադարեանց, Վ. Լուսինկի, Քր. Միքայէլեանց

ՆԵՐՈՒՆ ԼՈՒԿԵՐ

Կ. Պօլսից մեզ գրում են մայիսի 18-ից. «Հաստ սիրալիք ընդունելութիւն գտան ուսանական դեսպանատան մէջ Խովիրեան պատրիարքին ներկայացուցիչները, որոնք Ռուսաց Յարին թագադրութեան հանգէսին առթիւ դեսպանատան մատուցին մէջ կատարված կրօնական արարողութեան գացին ներկայ գտնուել մայիսի 14-ին, և նորհանգրովներ ենք ու բարեմաղթութիւններ ընել: Գացողներն էին պատրիարքական փոխանորդ Գաբրիէլ վարդապետ ձեռնադրեալ և պատրիարքական թարգման Տիրան Էֆէնդի Գէլէկեան: Սիրալիք ընդունելութիւնը չափազանց ուրախութիւն պատճառած է կ. պօլսեցի հայերին:

Թագաւոր Կայսրը, համաձայն ներքին գործերի մինիստրի ամենապատշաճ զեկուցման, մայիսի 14-ին ամենաողորմածաբար բարեհաճել է նորհանգրովներ և քաղաքացիական ծառայութեան համար, ոսկեայ ակնակալու լանջական խաչ էլքիւնդի Արեգի անդամ երեմիա արքեպիսկոպոս Գալատեանցին, և ս. Վլադիմիրի շքանշանի 3-րդ աստիճանը—Աստրախանի թեմի առաջնորդ Արիստակէս արքեպիսկոպոս Սեդակեանցին:

Մեկ հաղորդում են, որ հայոց զերաւանները այս օրերս զբաղված են ապագայ սեզօնի հայոց խմբի կազմակերպութեան հարցով: Այդ առթիւով հայոց բնակ ծառայողներին՝ մեր խորհուրդը հետեւեալն է.—խմբի մէջ հրաւիրել բոլոր եղած ուղերը, առանց հիմնելու գործը անձնական թշնամութեան կամ բարեկամութեան տեսակէտի վրա, հրաւիրել պօլսեցի զերաւաններին, բանի որ տեղացի հայ զերաւաններին կազմել շատ թոյլ է:

Բարձրագոյն հրամայված է պետական գանձարանից 30,000 ռուբլի բաց թողնել զերկական ուսուցիչներին միանուագ նպատակ տալու համար թագադրութեան առթիւով:

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ Վ. Գօլուբէվ մտադիր է նուրիլ Որանիէրաւում ունեցած իր չքեղ ամբարանոցը և հարկել հազար ռուբլի դրամադուլի այն նպատակով, որ հիւանդ և ծերացած գրողներին համար մի ազատարան բացվի: Այդ ապաստարանի կանոնադրութիւնը մշակելու համար պէտք է կազմվի մի յանձնաժողով գրողներից:

«Тифлисский Листок» լրագրում կարդում ենք. «Անդրկասպեան երկիրը շատ չուտ ուսանելու նպատակով ծրագրված է հիմնել կրասնովորական, Ղալ-Արվատում, Արխաթում, Մէր-

վում, Չարջում, Սերախում, Չիքչլարում, Կէօքէլէկում և Բախում նոր ուսանող տեղական դպրոցներ, Թուրքեստանում գոյութիւն ունեցող դպրոցների նման, այդ դպրոցներում կընդունվեն երկուսուսու երեխաներ և ուսանող լեզուի հետ կաւանդվեն տեղական և պարսկերէն լեզուները»:

ԼՍՈՒԻ Գիւլաբարակի գիւղից մեկ գրում են. «Անընդհատ տեղացող անձրևները մեծ վնաս են պատճառել ապագայ հնձին, հացահատիկը փոխարինելով դժբախտիկով, որը ԼՍՈՒ սեփականութիւնն է այսպիսի անձրևային տարիներում»:

ԲԱՅՈՒԹՅ մեկ հաղորդում են, որ նաւթի գինը այնտեղ դժգոյի կերպով բարձրացել է: Հում նաւթը, որ ձմրվում էր 7—8 կոպէկի, այժմ ոչ միայն այլ ես չէ էթանանում, այլ ցոյց է տալիս հակում աւելի ես թանկանալու: Եղել են մի քանի առքեր՝ 8 1/4 և 8 1/2 կոպէկով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻԻՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՐԵԿՈՒԹԻՆՆԵՐ

Կ. Պօլսից մեզ գրում են. «Բ. Գուրը, Արգաւորութեան և Ոստիկանութեան նախարարները թէ գլխի երէնքը գրելով Պատրիարքին խնդրած են, որ այս տարի չը կատարուի Սահմանադրութեան տարեդարձի հանգէրը: Պատրիարքը, որ Քաղաքական Ժողովին խորհրդածութեան ենթարկեց այդ թղթերը, իրեն արժանաւայել և դանակով մը յիշեցուց, որ ազգը սիրտ չունի ուրախութեան ցոյցեր ընելու և չի կրնար տօնել հանգէս մը, որ նշանակութիւն մը չունի, քանի որ Սահմանադրութիւնը չառանց բռնաբարւած ու խախտուած է արդէն: Այսպէս, Սահմանադրութեան համբաւուր հանգէսը այս տարի ալ պիտի չը կատարուի»:

Կ. Պօլսից մեզ գրում են. «Կրթական նախորդ նախարար Միւնիսթր-Կալա, որ Պարսկաստանի դեսպան անուանուեցաւ, պարզապէս արտաքսւած է Թուրքիայէն, նախարարական խառն նիստի մը մէջ բաց է լայ յայտարարած ըլլալուն համար, թէ անպատճառ պէտք է բարեկարգութիւններ ընել և հիմնական քաղաքականութիւնը փոխել»:

ՆԱՄԱԿ ԹԻՊՈԳՐԱՖԻՑԻՑ

Կ. Պօլսի, մայիսի 14-ին

Ամենէն աւելի անուանական տաղանդն է, որ երթալով կը սաստկանայ ու կը փութացնէ անխառնափնի բազմաթիւ: Առանց բացառութեան տեղի, անվճար կը մնան կառավարական պաշտօնները: Կ. Պօլսից գանձը կը պարարտացնէին Հայաստանի թիւրք նահանգապետները, ահագին քանակութեամբ գրամ զրկելով. հիմակ ստիպուած են կենսորեն օգնութիւն ուղել վճարելու համար զաւառական պաշտօնները: Կենսական կառավարող եղած է եւմասկան նախարարութեան և Գրան այս տեսակ դիմում ընողներուն մէջ, իր նահագին մէջ զբոսնող պաշտօններուն գէթ քանի մը դրուշ տալու համար: Եթէ զաւառները չարունակեն իրենց վարչական պէտքերուն համար Պօլսից գանձը գրամ ուղել,—ստուգապէս զիտենք որ պիտի չարունակեն ուղել,—անանկաւոր կատարեալ պիտի ըլլայ: Պայրամի առթիւ տակաւին ամական վճարում չէ Պօլսից պաշտօնները: Կը կարծուի, թէ գանձին մէջ գտնուած քիչ մը գրամը պիտի յատկացնեն Կրթիչի գործերուն, եթէ այս որոշումը գործադրուի, թիւրք ընտանիքներու զօգտութիւնը վերջին ծայր պիտի սաստկանայ կառավարութեան գէթ:

Պայրամը առանց կարևոր դէպքի անցաւ: Թէպէտ տեղական թերթերը գրած էին, թէ «Հայաստանի հասարակութիւններու բոլոր հոգեւոր պետերը կայեւրական պաշտոն երթալով, իրենց հաւատարմական զգացումներուն հաւատարմը մատուցին յոստ կայսերական գահայից, սակայն Խովիրեան Մատթէոս Պատրիարք չէր գտնուէր պալատի այդ այցելուներու կարգին մէջ: Ծարաթ օր (մայիս 11) հայոց պատրիարքը խսկիւ տար թաղուեցաւ, քանի մը օր ետքը միայն պատրիարքարան իշխելու համար:

Խովիրեանին ընթացքը, որքան ալ բանաւոր, կատարեցուցած է կառավարական չրջանակները և հայ էֆէնդիներու ու կղերականներու պզտիկ խումբի մը զայրույթը զրոյթ ած: Ատոնք հիմակ նոր օգիտութեամբ կաշխատին տապալել պատրիարքը և վարչութիւնը, իրենց ազգայնաս խորհուրդներուն աւելի լայն ապարդգ գտնելու յուսով: Կաշառակուր խմբագիր մը և հոգեւորական մը կը կատարեն միտքերը արտաբերու. հրապարակային դերը, առաջինը իր յօդադրուած թերթովը և երկրորդը իր ողորմելի ձուռմարանութիւններովը:

Առաջինն է «Մանդուկի» խմբագիր Կարապետ Փանոսեան: Սեպտեմբեր 18-ի ցոյցէն ետք «Մանդուկին» նոր ոգի առաւ. կառավարութիւնը 15 ոսկի ամսական յատկացուցած էր իր բազմամեայ վատապաւորին, որպէս զի նոր եռանդով կատարէ յայտնի դերը, և պէտք է ըսել որ Կարապետ Փանոսեան հաւատարմութեամբ կը կատարէ զայն մինչև այսօր: Սեպտեմբերէն մինչև հիմակ հրատարակած թրքախոս յօդուածներէն կարելի է տեսնել հաւաքածոյ մը չինել: Չարդերուն պատասխանատուութիւնը հայերուն վրա ձգեց, ամբաստանեց պատրիարքը իր մասնակից յեղափոխականներու, առաջարկեց զգնուի թղթով մը սուլթանին գլխութեան դիմել: Ինչպէս մինչև հիմակ տեսնուեցաւ, այդ յօդուածները ու և է հետեանց չունեցան, թէ ասկան քիչ մը վնասութիւն պատճառեցին անտարակոյս հեռուոր հայերուն, վտանգը աւելի մեծ կըլլար, եթէ ազգային գիտակցութիւնը այսքան արթնացած չըլլար: Վերջերս սկսած է կատարուէն պաշտպանել պատրիարքը հրաժարեցնելու խնդիրը. հրատարակեց Միս քանուղ աւազակին (Յովհաննէս Գաղանձեան հակաթու) մէկ նամակը, Խովիրեանն պատրիարքին ողորմած, որուն մէջ անպատկառ կերպով կը յորդորէ պատրիարքը հրաժարելու, թախուած արիւններուն պատճառ նկատելով զայն: Այդ նամակը «Մանդուկին» հաղորդուած է ոստիկանութեան զաղտնի գործակալ Լուս Սիսեան մասնախի կողմէն: Գեռ վերջին թիւին մէջ (մայիս 11) կը պաշտօնակէր զարհուրելի մատնութիւն մը. ուշադրութիւն կը հրաւիրէ կարգ մը հայ հարուստներու վրա, որոնք մերժած են «Մանդուկին» թիւերն ընդունել ու կարգալ:

Իսկ երկրորդը, հոգեորականը, Յովհաննէս քահանայ Մկրեանն է, որ ամէն տուն կը մտնէ կիւլէ, նոյն իսկ ընտանիքները համոզելու համար որ Խովիրեան պատրիարք ազգին զլխուն կատարեալ փորձանք եղած է, ան է այսքան մարդ ջարդել տուողը, մասնակից է յեղափոխականներուն, պէտք է հրաժարեցնել զինքը որ խաղաղութիւնը թագաւորէ և այլն: Մկրեանը իր մասնակցի թրքաւէր է Էֆէնդիներու ամէն ձեռնարկներուն, վարչութիւնը և պատրիարքը տապալելու: Անոնց հետ միացած հրաժարելու պատճառ եղաւ Ներսէս վարդապետ Խարախանեանին Բերայի քարոզչութիւնէն, և Կիւմարեան համբաւուր Հայեակ եպիսկոպոսը բերել տուաւ այդ պաշտօնին: Իր ընթացքը գնաւորան չըլնանականութեան մէջ յանդիմանութեան առիթ եղած է, սակայն Մկրեան առանց քաշուելու կը շարունակէ իր վնասակար դերը:

Պ—Ի

ԽԱՌՆ ԼՈՒԿԵՐ

Թիւրքաց արտակարգ դեսպանութեան հետ Մոսկուա է գնացել Կ. Պօլսի «Խիզաժ» լրագրի խմբագիր Ամէդ Զեկըլէթ: Դա նոյն մարդն է, որ ինչպէս հաղորդել էր Կ. Պօլսի մեր թղթակիցը, մի քանի ժամանակ առաջ «Խիզաժ» մէջ կատարի արշաւադ էր սկսել ընդհանրապէս բրիտանականութեան դէմ: «Новое Время» լրագրի 7261 համարում գտնում ենք նրա մի թղթակցի տեսակցութիւնը թիւրք հրապարակախօսի հետ: Ամէդ Զեկըլէթ թղթակցի այցելութեան ժամանակ գրում էր թղթակցութիւն իր լրագրին: Յայտնելով որ ցնդուրան շատ բան է չնչում իր գրածներէն, նա ասաց.

«Ես մասամբ գիտեմ թէ ինչ կարելի է գրել և ինչ է կարելի գրել: Որինակ, ես գիտեմ, որ կարող եմ որքան կանխած հայտնել Անդրիան, բայց չեմ յանդգնի ոչ միայն թշնամաբար, այլ նոյն իսկ առանց յարգանքի խօսել Ռուսաստանի մասին: Մենք այժմ ձեռք բերեալներն ենք և դաշակիցները և ուղում ենք ձեռք հետ մօտիկուց ծանոթանալ: Չուր չեն դեսպանութեան հետ թիւրք հրապարակախօս ուղարկել: Ծանապարհորդելով Մարթոսիայում, ես լաւ տեսայ ուս հասարակ ժողովուրդը և գտնուեմ եմ, որ նա շատ նման է թիւրք ժողովրդին, նոյն-

պէս պարզ է և անյիշատակ: Եւ ինչպէս այս ժողովուրդները պիտի պատերազմեն միմեանց դէմ: Իսկ լրագրի թղթակիցը յետոյ խօսք է բացել հայերի կոտորածներին մասին: Անմէջ ձեռքէն յայտնել է, որ այդ բոլորի մէջ մեղաւորը Անգլիան է, որի դեսպանատունը նմանվում էր առաջակներին զլուստր ընդին, որտեղ հայերը բոլորովում էին ապստամբութիւն սկսելու: Ձեռքէն իրեն թիւրք հայրենասէր, սատակ վրդովւած էր հայերի շարժումը տեսնելով:

Այս «Ինքնակի» խմբագիրը յայտնել է, որ Մոսկվայի մէջ չափազանց քիչ Եւրոպայ կայ: Իսկ թղթակիցը իրաւացի լացականչում է. «Տես որտեղից են դուրս գալիս Մոսկվայի ուղղած յանդիմանութիւնները, թէ քիչ Եւրոպայ կայ այնտեղ»:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՈՍԿՎԱ, 22 մայիս: «Ազնուականներին ժողովում» ազնուականութիւնը պարահանդէս տուեց ի պատիւ Նոյա Մեծութիւններին: Դասիւնը ձմեռային այցու տեսք էր ընդունել: Հիւրերն էին մօտ 6000 հոգի: 10 ժամ 50 րոպէս օրէկտորն անցնէ ժողովրդական օրհներգը: Ժողովարանի բաց պատուհաններում լավեցին ժողովուրդի ոգևորված բացականչութիւնները, որը ողորմում էր Նոյա Մեծութիւններին: Նոյա Մեծութիւններին դիմաւորեցին Մոսկվայի ազնուականութեան դատաւական պարագլուխները՝ նախագահական պարագլուխի առաջնորդութեամբ: Վերին ստորինների վրա Նոյա Մեծութիւններին դիմաւորեցին պարահանդէսի աստիճանի իշխանուհի Տրուբեցկայա՝ իշխանուհի Գալցիցայի և Մ. Ն. Կրիստինի հետ: Ողջուններ ընդունելուց յետոյ կայսերական քաղաք անցաւ հիւրասենեակը, ուր հաւաքված էին Մեծ իշխանները և իշխանուհիները և օտար բարձրագույն անձինք: Որհնագիր յետոյ օրէկտորը անցնէ լայնահիւս: Առաջին պայտը թագուհի կայսրուհին արաւ իշխան Տրուբեցկայի հետ, երկրորդը՝ նախկին պարագլուխ կոմս Շերեմետևիչի հետ, երրորդը՝ նախկին պարագլուխ զենեքալ Երմոլովի հետ: Թագուհուր առաջին պայտան արաւ իշխանուհի Տրուբեցկայի հետ, երկրորդը իշխանուհի Գալցիցայի հետ և երրորդը՝ Կրիստինի հետ: Նոյա Մեծութիւններին երկուց զմեռ էին օտար պրինցիպներ, պրինցուհիներ, Մեծ իշխանուհիներ և իշխանուհիները: Գիւրկայ առաջին ժամին Նոյա Մեծութիւնները դուրս տուեցին կայսերական օթեկանից դահլիճում բոլոր հաւաքվածներին: Թնդաց բարձրագույն շարքը:

Մայիսի 22-ին, առաւօտեան 9 ժամին, Նոյա Մեծութիւնները գնացին Տրուբեցկայի-Սերգիևսկայա վանքը:

Սեր Գիւստ, թագուհու հրամանով, յայտնեց արտաքին գործերի մինիստրին թագուհու ցաւակցութիւնը խօսքով: Պաշտօնական պատահած աղէտի պատճառով:

Մայիսի 21-ին աւստրիական դեսպանի մօտ տեղի ունեցաւ ճաշ, որին ներկայ էին Նոյա Մեծութիւնները:

ՊԱՐԻՑ, 23 մայիս: Պարիզի քաղաքային խորհրդի նախագահ է ընտրված արմատական Պիէր Բօռնէ: Ուրիշ կանգնողները չը կային:

ՎԻԵՆԱ, 23 մայիս: Կ. Պօլսից հաղորդում են, որ Կրետի ջրերն ուղարկած զինուորական նաւերին հրամանատարված է հոգ տանել միայն հայրենակիցներին կենսքի և գույքի մասին: Իսկ Կրետի նաւահաշտային քաղաքներում աւելի լուրջ անցքեր պատահելու դէպքում, նաւերի հրամանատարները պէտք է փոխադարձ համաձայնութեամբ համապատասխան միջոցներ ձեռք առնեն:

ԲԵՐԼԻՆ, 22 մայիս: Հէնց որ Մոսկվայի աղէտի մասին վիճելով կայսրը տեղեկութիւն ստացաւ, ցաւակցական հեռագիր ուղարկեց Ռուսաց կայսրին:

ՀՈՒՄ, 22 մայիս: Պատգամաւորներին ժողովը միաձայն վճռեց դատի ենթարկել զենեքալ Բարատիերին:

ԿԱՆՔԱ, 22 մայիս: Պետութիւնները համաձայնութիւն կայացրին առաջարկել յունաց կառավարութեանը՝ զիմէ կրէտացիներին և խորհուրդ տալ նրանց զգուշ և չափաւոր լինել:

ԼՈՆԴՈՆ, 22 մայիս: «Daily News»-ում տպված է Ֆիլք-Սթրիտի հաղորդագրութիւնը Ռուսիայի քրիստոնեաների կոտորածի մասին: Ֆիլք Սթրիտի հաշուով, որը ուղարկված էր տեղի ու տեղի քննութիւն կատարելու համար, կոտորված են մօտ 8000 հոգի:

ԿԱՅԻՐԷ, 22 մայիս: Մայիսի 20-ին էլաշարեան մզկիթին կից զարդում անկարգութիւններ տեղի ունեցան: Ուսանողները հրաժարվեցին ներս թողնել սանիտարական այն պաշտօնականներին, որոնք եկան իրաւորներու խօսքայի առիթով որոշված միջոցներ: Խառնակները քարէ կարկուտով հանդիպեցին նախադաշտին և նրա օգնականին, որոնք վերադարձան: Կարգը վերականգնվեց ոստիկանապետի ձեռքով:

ՄՈՍԿՎԱ, 23 մայիս: Նոյա Մեծութիւնները օտար բարձրագույն անձինք, կայսերական ընտանիքի անդամներ և բարձր պաշտօնեաների հետ այցելեցին այսօր դուռնին: Դուռնայի առաջ, սպի-

տակ դրօշակներով, կանգնեցին Մոսկվայի քաղաքային զարդերի տոնական շորեր հագած երեխաներ: Սանդուղքի վրա կանգնած էին փոքր աղջիկներ՝ սպիտակ շորերով և ծաղիկներով լի դամբիւնները ձեռքում: Երկու ժամին շուրջին ձայն լսվեց, երեխաներն էին դրանք, որ ողջունում էին թագաւորին և թագուհուն: Պրէսբիտերիան մարշի ձայնի ուղեկցութեամբ Նոյա Մեծութիւնները մտան դահլիճը: Քաղաքագլուխը վարչութեան անդամներին հետ դիմաւորեցին Նոյա Մեծութիւններին, մանուկները ճանապարհը ցանում էին ծաղիկներով: Երբ Նոյա Մեծութիւնները գրաւեցին իրանց տեղերը, քաղաքագլուխը Բուկալիշնիկով կարգաց դուռնայի որդուհուր, որով ի յիշատակ թագաւորութեան ապստամբ է հիմնվում 200 մարդու համար: Դրանից յետոյ մանուկները երգեցին հանդիսաւոր կանտատա (Բուկալիշնիկով խօսքեր, Խալիլ-Խանովի երաժշտութիւն): 500 մանուկների երգեցողութիւնը այնքան լաւ էր, որ թագաւորը ցանկացաւ կրկին անգամ լսել կանտատան: Երգեցողութիւնից յետոյ, քաղաքագլուխը Բուկալիշնիկով ասեց թագաւորին. «Մեծ թագաւոր, փայտու գիծ է թողնելու այսօրվայ օրը Գա Մոսկվայի պատմութեան մէջ: Ամբողջ Մոսկվան ուրախանում է, ամբողջ Մոսկվան երջանկացած է այն բարձր պատուով, որ Գու ցոյց տուիր նրան, թագաւոր, այսօր այցելելով դուռնին և ողջունելով Մոսկվայի բնակիչներին մանուկներին: Մոսկվայի քաղաքային դուռնին անսահման երջանիկ է առաջին անգամ ընդունելով իր մօտ իր Միապետին, տեսնել իր պատերի մէջ Բեռ, Մեծ թագաւոր, Մեծ թագուհի և Գա Արքայական ընտանիքը, ամենամեծից, սրտագին երախտագին ստեղծեալ խմբին, միմեանց գիտին, երկրպագում է Բեռ, և միմեանց լաւեան անջնջելի կը մնայ այս օրս քաղաքային դուռնայի շնորհապարտ յիշողութեան մէջ: Կեցցէ Մեծ թագաւորը, կեցցէ Մեծ թագուհին և ամբողջ թագաւորական ընտանիքը: Եւ թող Նրանց պահպանէ Տէրը իր շնորհով երկար տարիներ, յուրախութիւն ի սկզբանէ հաւատարիմ և թագաւորին և թագաւորական ընտանիքը սիրող Մոսկվայի «Թնդացի» շուրջին և ժողովրդական հիմնի ձայնները: Երբ որ բոլորը լսեցին, թագաւորն ասաց:

«Կայսրուհին և Ես շնորհակալութիւն ենք յայտնում Մոսկվայի դուռնային ջերմ դիմաւորին և այսօրվան տօնի համար: Մեր սրտերից անջնջելի կը մնայ այդ սիրային ընդունելութիւնը: Ամեն բանի համար ի սրտէ շնորհակալութիւն ենք յայտնում և ցանկանում ենք կատարեալ առաջադիմութիւն Մեր թանգաւորին Մոսկվային»:

Որպէս պատասխան Միապետի այդ ողորմած խօսքերին կրկին թնդաց շուրջին: Բացականչութիւններով մէջ լսվում էին և մանկական ձայններ:

2 1/2 ժամին Նոյա Մեծութիւնները, օրհներգի ուրայի ձայնի ուղեկցութեամբ, հեռացան դուռնայից:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ		Մայիսի 21-ին	
Լճուցիների վրա 10 ֆունտ արծէ . .	94 ր. 10 կ.	Բերլինի վրա 100 մարկ . . .	45 > 90 >
Պարիզի վրա 100 ֆրանկ . . .	37 > 32 1/2 >	Ռուսի . . .	7 > 50 >
Մաքսային կուպոններ . . .	149 >	Ռոստային դիպոնտ . . .	5 > 70 >
40/0 պետական բնութա	99 7/8 >	40/0 պետական բնութա	99 7/8 >
Ներքին 50/0 առաջին փոխառութ. . .	28 1/2 >	— երկրորդ	252 >
50/0 գրաւ. թղթ. աղ. կալ. բանկի . . .	212 1/2 >	50/0 պետական երկաթուղ. բնութա . . .	100 3/8 >
40/0 ներքին փոխառութեան	98 3/8 >	41/2 0/0 գրաւ. թղթ. աղ. կալ. բանկի . . .	101 1/4 >
Աղ. կալ. Պետ. բանկի խաղարկութ. . .	— >	41/2 0/0 վկայակ. գր. աղ. հոգ. բանկի . . .	100 3/4 >
41/2 0/0 վկայակ. գր. աղ. հոգ. բանկի . . .	— >	Փոխ. կրեդիտ. ընկեր. մտաւ	— >
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. . .	101 3/8 >	Մոսկվայի քաղաք. օրկապահանք . . .	101 1/4 >
Օղէտայի	101 >	Թիֆլիսի	98 1/4 >
Թիֆլիսի կալ. բանկի 60/0	— >	50/0	— >
Գուրկայի	60/0 . . .	50/0	— >

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱՍԻՆՔԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԵԱՍ ԱՐՄԻՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են աւեն օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՌՕՏԵՐԸ
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերադու-

ժողովեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւններ:

Դ. Գ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ ԴՈՒՆԱՅԵՎԱ-ԲՈՒԴԵՆԿՈ—10—11 ժ. կանանց և երեխ. հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻԶ—12—1 ժ. ականջի, կուրդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայից և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և չաբաթ:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 1/2 ժ. ներքին և երեխայից հ.

ԵՐԵՎԱՆԵՐԸ՝
ՊՐՕՏԱՍԵՎԻԶ—5—6 ժ. հինգշ. և չաբաթ:

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի և ռեուական օրգանների հ. ներքին և մարթի հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ քիմիական և խոշորացուցական հետազոտութիւններ է անում մէզի, խիւի, աւրան, կաթի և այլն:

Վճար 50 կոպ. Համախորհրդի (Կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Պատու ունեւ յայտնելու յարգելի ծիսականաց և ժամաւոր ժողովրդականաց, Հաւաքարի Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻԶ եկեղեցւոյ, որ մայիսի 25-ին, այսօր, շաբաթ օր, երեկոյեան ժամի 4-ին, լինելու է Հանդիսաւոր բացում և օծումն նոյն եկեղեցւոյ:

Միտիչ քահ. Գուլամիրեանց 1—1

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐԱՅԻ վեցերորդ դասաւան մի աշակերտ
ՅԱՆԿԱՆՈՒՄ Է ԴԱՍԵՐ ՈՒՆԵՆԱԼ
ԲՕՐԺՕՄՈՒՄ

ամարային ամիսների ընթացքում: Յանկացողները թող զիմեն «Էժանազին զարդարան», (վեկամիսովկայա փողոց, № 5), առաւօտեան 9—1 ժամը:
(№ 60) 1—4

ՏԱՓԻ ԹԱՂԻ (Բանդիանց) եկեղեցւո երկու կրպակները և մի նկուղ ամիս 30-ին ԿԱՊԱԼՈՎ ԵՆ ՏՐՎՈՒՄ, երեք տարի ժամանակով: Յանկացողները կարող են շնորհ բերել նոյն եկեղեցւո դաւիթը, ներկայ մայիս ամիս 30-ին, հինգշաբթի օրը, առաւօտեան 10 ժամին: Պայմանների մասին կարելի է փաղօրօք տեղեկութիւն ստանալ եկեղեցւո երէցփոխանից:

1—1
Գործակալ Ղ. ա. ք. Խարաղեանց

ՆՈՐԵՐՍ ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ՄՈՍԿՎԱՅԻՆ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ»

Г. ХАЛАТЯНЦЪ
АРМЯНСКІЙ ЭПОСЪ
Въ Исторіи Арменіи Моисѣя Хоренскаго.
Опытъ критики источниковъ.
Часть I: Исслѣдованіе, ч. II: Матеріалы.
Москва, 1896, 8, стр. X + 347 + IV + 80.—Цѣна 7 р. рубль.
(№ 160—7.) 1—3

СЪВЕРНОЕ СТРАХОВОЕ ОБЩЕСТВО

ДОВОДИТЬ ДО всеобщаго свѣдѣнія, что въ г. Баку, на Николаевской ярмаркѣ, въ лавкѣ № 31—42, съ 6-го сего мая, производится

РАСПРОДАЖА

мануфактурныхъ товаровъ разныхъ московскихъ фабрикъ, какъ-то: Морозовыхъ, Барановыхъ, Циндела, Зимана, Зубкова и др., въ количествѣ 500 кнпъ, оставшихся послѣ аварии.

Распродажа будетъ производится покинно, большими и малыми партиями и поштучно.
(№ 58) 3—5

ԿԱԿԱՕ ԲԼՈՕԿԷՐ

ՍՆԵԴԱՐՈՐ ԽՄԻԶՔԻ, արկղիկներում, 1/1, 1/2, 1/4 և 1/8 կիլոգրամ:
(GRAND PRIX) Բարձրագույն պարգև: Անավերպեղի 1894 թվի համաշխարհային ցուցահանդիսում:
Կլաւոր պահեստ՝ ղեկարարական ապրանքների Բարձրագույն հաստատված կովկասեան ընկերութիւնը թիֆլիսում:
(№ 6) (Կ) 21—50